

## Ալբերտ Մուշեղյանի-85

Նոյեմբերի 18-ին Հայաստանի Կույրերի Միավորման մշակույթի տանը նշվեց քանասիրական գիտությունների դոկտոր, գրականագետ, հայագետ, թարգմանիչ ու քանաստեղծ Ալբերտ Մուշեղյանի ծննդյան 85-ամյակը: Կրթության և գիտության ոլորտում մեծ ներդրումների համար և ծննդյան 85-ամյա հոբելյանի կապակցությամբ Ալբերտ Մուշեղյանը պարգևատրվեց Կրթության Գիտության Նախարարության «ՈՍԿԵ ՄԵՂԱԼՈՎ»: Հայաստանի ազգային գրադարանը իր հերթին հայ մշակույթին մատուցած ծառայությունների, հայագիտության և գրականագիտության զարգացման գործում ունեցած մեծ ավանդի և ծննդյան 85-ամյակի առթիվ Ալբերտ Մուշեղյանին պարգևատրեց Հայ Առաջին տպագիչ՝ «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով: